Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ -ի Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝

Տարբերակված ուսուցումը՝ որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց

Հետազոտող ուսուցիչ՝ Խաչատրյան Ռուզաննա

Հրազդանի թիվ 11 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....3

Տեսություն.....3

Խնդրի բացահայտում..... 5

Ի՞նչ է տարբերակված ուսուցումը.....6

Տարբերակված ուսուցման փուլերը.....7

Տարբերակված ուսուցման տեսակները.....8

Տարբերակված ուսուցումը «Ֆրանսերեն» առարկայի խորացված ուսուցման դասարաններում.....14

Եզրահանգում.....21

Ներածություն

Խնդրի վերհանում

Ի՞նչ գիտեք ձեր հետազոտվող հարցի վերաբերյալ	**Ո՞րն է խնդիրը**	**Ու՞մ հետ կարող եք խորհրդակցել**	**Հնարավոր լուծումներ**
Գիտեմ, որ տարբերակված ուսուցումը յուրաքանչյուր սովորողի կարիքների համապատասխան, նրանց հետաքրքրություններով պայմանավորված ուսուցում է, որը հանգեցնում է ցանկալի վերջնարդյունքի, հասցնելով յուրաքանչյուրին որոշակի աստիճանի	Ի՞նչ ուղիներ և մեթոդներ ընտրել ցանկալի նպատակին հասնելու համար	Ժամանակակից մեթոդներին լավատեղյակ մեթոդիստ-մանկավարժների հետ, ովքեր տեղյակ են նաև աշխարհում գործող առաջավոր դպրոցների փորձից	Կատարել ուսումնասիրություններ ուսուցման ընթացքում, ուսումնասիրել մանկավարժական մասնագիտական գրականություն, դիտել տեսադասեր, ֆիլմեր

Հարցի ձևակերպում՝ Արդյո՞ք տարբերակված ուսուցումը կբարձրացնի ուսուցման արդյունավետությունը տարրական դպրոցում (ֆրանսերենի խորացված ուսուցմամբ 3-րդ դասարանում):

Տեսություն

Խորանալով խնդրի մեջ, ունենալով նաև բավական երկար տարիների մանկավարժական աշխատանքային փորձ, ուսումնասիրելով առաջավոր դպրոցների մանկավարժների աշխատանքի մեթոդները, հնարավոր եմ համարում գտնել ճիշտ լուծումներ տարբերակված ուսուցման ռազմավարության իրականացման համար:

Ս. Վիլլիսը և Լ. Մանը պնդում էին, որ տարբերակումը ուսուցման փիլիսոփայությունն է, որի ելակետային դրույթը ուսուցումը սովորողի առանձնահատկություններին համապատասխանեցնելն է (Willis, S.,Mann, L., (2000)):

Արդյունավետ դասի իմ բնորոշման պարագայում ամեն մի սովորող պետք է ներգրավված լինի դասապրոցեսին ՝ իրականացնելով իր ուժերի ներածին չափով համապատասխան ուսումնական գործունեություն, որի արդյունքում էլ կունենա որոշակի առաջընթաց, որը հանդիսանում է հանրակրթական պետական չափորոշչով (ՀՊՉ) սահմանված վերջնարդյունքը:

<u>Ենթանպատակներ</u>

Տարբերակելով ուսուցման բովանդակությունը, գործընթացը և արդյունքը՝ կարող ենք զգալիորեն բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը՝ հասնելով նրան, որ դասարանի յուրաքանչյուր սովորող կարողանա

- անսխալ կամ 80% ճշգրտությամբ կատարել իրենց տրված առաջադրանքները (տարամակարդակ),
- պարզաբանել աշխատանքի՝ ուսումնական առաջադրանքի կատարման ընթացքը
- և ինքնուրույն կազմել նմանատիպ առաջադրանքներ

Կարծում եմ այս ենթանպատակների իրագործման պարագայում հնարավոր է հասնել ուսումնական նյութի իմաստավորված յուրացմանը, որն էլ արդյունավետ ուսումնառության ցուցիչներից է:

Գլուխ 1

Խնդրի բացահայտում

Հաճախ մեր դասը վերլուծելիս բախվում ենք այն իրողությանը, որ դասապրոցեսին հիմնականում ակտիվորեն ներգրավվում է աշակերտների ընդամենը մի խումբ: Եթե փորձենք ընդհանրացնել և տալ մերօրյա դասերի ընդհանրական պատկերը, ապա ունենում ենք հետևյալ 2 իրողությունները:

Առաջին դեպքում հիմնականում բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներն ակտիվորեն մասնակցում են դասապրոցեսին, անընդհատ դասի կենտրոնում են, իսկ դասարանի մնացած աշակերտները ուղղակի պասիվ նստում են, սպասում, որ առաջադրանքը գրվի գրատախտակին, իրենք արտագրեն՝ դրանով իսկ «հավաստելով» իրենց մասնակցությունը դասապրոցեսին կամ որ ավելի վատ է, ուզում են «աննկատ» մնալ, որպեսզի ուսուցիչն իրենց «դաս չհարցնի»՝ անհամբեր սպասելով դասի զանգին:

Երկրորդ դեպքում ուսուցիչը ստիպված «լռեցնում է» դասը լավ սովորած, ակտիվ աշակերտներին (նրանց դաս չհարցնելով), որպեսզի հնարավորություն ունենա դասին ներգրավելու նաև պասիվություն ցուցաբերող աշակերտներին:

Ակնհայտ է, որ երկու պարագայում էլ աշակերտների մի խումբ միշտ «տուժում» է, բայց դժվարանում եմ փաստել՝ արդյոք սովորողների թեկուզև մի փոքր խումբ «շահում է»:

Ճշմարտության համար պետք է ասել, որ երկու իրավիճակներում էլ ուսուցիչները փորձում են ներգրավել դասապրոցեսին բոլոր աշակերտներին՝ հիմնականում հարցադրումների միջոցով, սակայն պետք է նշել, որ դրանք « ակնթարթային կամ պահի ազդեցություն» են ունենում և չեն ապահովում ամբողջ դասի ընթացքում սովորողների ակտիվ ներգրավվածությունը:

Պարբերաբար բախվելով այս խնդրին՝ ցանկալի է դասը «կառուցել» այնպես, որ դասին ներգրավվեն դասարանի անխտիր բոլոր աշակերտները, և որ ամենակարևորն է ապահովվի յուրաքանչյուր դասին յուրաքանչյուր սովորողի թեկուզև փոքրիկ առաջընթացը՝ սկսած ամենաթույլ հնարավորություն ունեցողից մինչև օժտված աշակերտ. Ասել է թե՝ ինչպես ուսումնական նյութը հասանելի դարձնել աշակերտներին՝ յուրաքանչյուրին իրեն համապատասխան և հասանելի «չափաբաժնով»:

Տարբերակումը թույլ է տալիս ուսուցչին յուրաքանչյուր սանի հետ խոսել իրեն հասկանալի, հասանելի, հետաքրքիր և գրավիչ լեզվով, որի արդյունքում միայն կարող ենք ակնկալել արդյունավետ ուսումնառություն:

Գլուխ 2

Ինչ է տարբերակված ուսումնառությունը և ինչպես այն կիրառել

«Մենք բոլորս հանճարներ ենք, բայց եթե դուք պետք է ձկան մասին դատեք նրա ծառ բարձրանալու կարողությամբ, ապա նա ողջ կյանքը կապրի՝ իրեն ամենավերջին անհաջողակը համարելով»:

Ա. Էյնշտեյն

<u>Ի՞նչ է տարբերակված ուսուցումը</u>

Տարբերակված ուսուցումը, դա ուսուցչի կողմից <u>միևնույն բովանդակությունը</u> մատուցելիս, տարբեր ռազմավարությունների և բազմաստիճան առաջադրանքների կիրառումն է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սանի կարողությունների մակարդակը:

Տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդսկության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն

նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:

Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Տարբերակված ուսուցման փուլերը

Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

1. ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները
2. խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների
3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը

Ներդասարանային տարբերակում՝ ըստ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարման

Ամենատարածված ներդասարանային տարբերակման ձևը սովորողների կողմից տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարումն է:

- 1-ին մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, պատմել՝ առանձնացնելով գլխավոր մտքերը:
- 2-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, կազմել պլան և հարցադրումներ:
- 3-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, արտահայտել սեփական դիրքորոշումը գործող անձանց արարքների նկատմամբ, հասկանալ նրանց զգայական ապրումները: Իմանալ բառի տեսակներն ըստ կազմության և ըստ ժամանակաձևերի:

Կարող ենք տարբերակված առաջադրանքները տալ տարբեր ձևերով

- ուսուցիչն ընտրում է տարբերակված առաջադրանք յուրաքանչյուր աշակերտի համար

- աշակերտն ինքն է ընտրում իր առաջադրանքը

Այս դեպքում ուսուցիչը պարտավոր է նախապես սովորողներին ներկայացնել առաջադրանքի մ բարդությունը և խորհուրդներ տալ, թե որ առաջադրանքն ընտրի:

2-րդ դեպքում ուսուցիչը կարող է ներկայացնել առաջադրանքի բարդությունը, բայց ընտրությունը թողնել աշակերտին: 3-րդ դեպքում աշակերտները իրենք են որոշում առաջադրանքի բարդությունը, իրենք էլ ընտրում:Առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը կամ էլ բացթողումների լրացմանը:

Տարբերակված ուսուցման ժամանակ աշակերտները կարող են ստանալ ծրարներում համապատասխան հրահանգնավորումներով առաջադրանքներ, նկարներ և այլն:

Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտին որոշել, թե ուսումնական նյութի յուրացումը որ մակարդակում կարող է յուրացնել: Սակայն անհրաժեշտ պայման է, որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից, և ուսուցիչը ուսումնական նյութը պետք է ներկայացնի առավելագույն մակարդակով: Եթե մի աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսն առավելագույն, ապա նա այդ հնարավորությունը պետք է ստանա:

Այսպիսով, տարբերակումը հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ ընդունակությունները, այլև հետաքրքրությունները:

<u>Տարբերակված ուսուցման տեսակները</u>

Ըստ ամերիկացի մանկավարժ Քերոլ Էն Թոմլինսոնի տարբերակված ուսուցումը բաժանվում է հետևյալ տեսակների.

1. Ըստ բովանդակային դասակարգման
2. Ըստ գործողությունների
3. Ըստ վերջնարդյունքների

4. Ըստ միջավայրի

Տարբերակված ուսուցում իրականացնելիս հաշվի ենք առնում սովորողի՝

1. Պատրաստակամությունը կամ կարողությունը, որը հնարավորություն է ընձեռում սովորողի շարունակական զարգացմանը:
2. Հետաքրքրությունների շրջանակը, որտեղ դրսևորվում է սովորողի մոտիվացիան
3. Ուսումնառության ոճը, որը արդյունավետ է դարձնում ուսուցումը:

Բ. Բլումի և Անդերսոնի աստիճանակարգերhttp://escs.am/am/news/6718?fbclid=IwAR2skiWoH6C26Ws1VDExn1fXCtwIzTxcw5vg71T5AhxwP_OCFK_CZx-Cxds

1.Ըստ բովանդակային տարբերակման

Ֆրանսերենից սովորողների առաջադիմության, նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման համակարգն առավել

ամբողջական, տեսանելի և կիառելի դարձնելու նպատակով հետևել եմ ամերիկացի նշանավոր հոգեբան և մանկավարժ Բենջամին Բլումի դասակարգմանը: Նա իմացական ոլորտում առանձնացնում է 6 բաղկացուցիչ կամ աստիճան՝ գիտելիք, ըմբռնում, կիրառում, վերլուծում, համադրում, արժևորում կամ գնահատում:

1. Գիտելիքը իմացական ոլորտի 1-ին աստիճանն է: Ձեռք բերած գիտելիքների հիման վրա սովորողը կարողանում է ճանաչել, նկարագրել, թվարկել, համապատասխանեցնել, վերարտադրել, պնդել:

Օրինակ՝ տրվում է տեքստ՝ որոշակի բառերում բաց թողնված տառերով, աշակերտը պետք է գտնի և տեղադրի տվյալ ուղղագրական կանոնին վերաբերող համապատասխան տառերը: Կամ տրված բառախմբից գտնի գործողություն ցույց տվող բառերը և այլն:

2. Ընկալում: Սովորողը հասկանում, մեկնաբանում էփաստերը, տեքստը, հիմնավորում է տվյալ քերականական կանոնի գործածությունը: Այս աստիճանում սովորողը կարողանում է պաշտպանել իր տեսակետը, տարբերակել, բացատրել, օրինակներ բերել, ամփոփել:

Օրինակ՝ որևէ տեքստի ընթերցումից հետո սովորողին առաջարկվում էդրան համապատասխան նկարազարդում անել, գույներ կամ երաժշտություն ընտրել: Կամ էլ քերականական որևէ կանոնի վերաբերող աղյուսակները մեկնաբանել, բացատրել, պատասխանել տեքստի հարցերին:

3. Կիառում: Սովորողը ձեռք բերած գիտելիքը կիրառում է գործնականում կամ նոր իրավիճակում:

Օրինակ ՝ աշակերտն ինքն է տվյալ ուղղագրական կանոնին ենթարկվող բառերը դասավորում համապատասխան գծապատկերների և աղյուսակների ձևով, տրված արմատների միացումով բառեր է կազմում, ավարտում է տրված նախադասությունը կամ տեքստը:

4. Վերլուծում: Սովորողը կարողանում է գտնել տեքստում կամ կանոնի սահմանման մեջ առկա տրամաբանական սխալները, տարբերել փաստը կարծիքից: Ուսուցիչը կազմում է առաջադրանքներ, որոնք պետք է ճշտել, դասակարգել, վերլուծել, համեմատել, հակադրել, բացատրել, գովազդել:

Օրինակ՝ ընդգծված բառերի փոխարեն սովորողն ընտրում է համապատասխան հոմանիշն ու հականիշը:Կամ էլ տրված տեքստում գտնում է բառի կամ փաստերի սխալ գործածությունը, շարահյուսական անհարթության դեպքերը և այլն:

5. Համադրում: Այս մակարդակում սովորողն ունի կանոնավոր և համակարգված բանավոր և գրավոր խոսք, կարողանում է ստեղծագործել, մշակում է գործողությունների պլան:

Օրինակ՝ տեքստում բաց թողնված կետերը լրացնում է պահանջվող բառերով, շարունակում է նախադասության միտքը, կամ տրված բառերով կազմում է տեքստ:

6. Գնահատում, արժևորում: Այս փուլում աշակերտը դատողություններ է անում գրական – գեղարվեստական, երաժշտական և արվեստի այլ ճյուղերի ստեղծագործությունների մասին՝ առաջնորդվելով ինչպես սեփական, այնպես էլ համընդհանուր չափանիշներով:

Օրինակ ՝ ուսուցիչն առաջարկում է կարծիք կամ տեսակետ հայտնել և գրել կարդացածի մասին, հիմնավորել կարծիքը գրական երկից կամ տեքստից բերված փաստերով:

Բ. Բլումի դասակարգման վերջին երեք ոլորտին են վերաբերում այնպիսի առաջադրանքներ, որոնք պահանջում են մտածողության բարձրակարգ որակների դրսևորում:

Օրինակ՝ երբ սովորողից պահանջվում է նոր վերնագիր ընտրել, տեքստը հատվածների բաժանել, հարցեր մշակել, վերնագրել դրանք, պատմության համար սկիզբ կամ շարունակություն հորինել, նոր հերոս ավելացնել և շարունակել պատմությունը, երկու գրական երկեր համեմատել և որոշակի եզրահանգման գալ:

1.Տարբերակումն ըստ գործողությունների

Ուսուցչի օժանդակությունն ըստ ուսումնառության ոճերի

- Ընթերցողական: Տրամադրել դասագրքեր
- Տեսողական: Տրամադրել նյութը բացատրող տեսադասեր
- Լսողական: Տրամադրել աուդիո դասագրքեր
- Կինեստետիկ: Առցանց ինտերակտիվ հանձնարարություն տալ

Ուսուցչի օժանդակությունն ըստ գործողությեւնների տիպերի

- Խմբակային աշխատանք
  - Ելնելով սովորողների հետաքրքրությունների շրջանակներից ստեղծել «կրթակայաններ» ՝ թեմաները բաժանելով խմբերի միջև:
  - Ելնելով սովորողների կարողություններից՝ հիմնական բովանդակությունը բազմաշերտ փոխկապակցված առաջադրանքների միջոցով բաշխել խմբերի միջև:

- Անհատական աշխատանք: Ելնելով սովորողների կարիքներից՝ կազմել անհատական օրակարգ: Նպաստում է սովորողների ինքնակառավարմանը:

3.***Տարբերակումն ըստ վերջնարդյունքի***

Ինչ է վերջնարդյունքը

Վերջնարդյունքը դա սովորողի կողմից դասի / թեմայի վերջում ստեղծած պրոդուկտն է՝ բովանդակության և հմտությունների մակարդակը ցուցադրելու համար:

Ի՞նպես իրականացնել տարբերակումն ըստ վերջնարդյունքի

Ուսուցիչը, ելնելով սովորողի ուսումնառության ոճից և նախապատվություններից, կարող է սովորողին հանձնարարել կատարել այնպիսի առաջադրանքներ, որոնցում կամփոփվեն թեմայի / դասի հիմնական հայեցակարգային պահանջները: Օրինակ՝ թեստ, նախագիծ, հաշվետվություն և այլն:

Որո՞նք են առաջադրանքի տիպերը՝ ըստ ուսումնառության ոճերի

- Ընթերցողական: Խորհուրդ է տրվում հանձնարարել գրքի վերլուծություն, էսսե
- Տեսողական: Խորհուրդ է տրվում հանձնարարել գրաֆիկ, նովել, թեմատիկ քարտեզ, սահիկաշար
- Լսողական: Խորհուրդ է տրվում հանձնարարել բանավոր հաշվետվություն
- Կինեստետիկ ուսուցում: Խորհուրդ է տրվում հանձնարարել մոդելավորում, լաբորատոր փորձեր և այլն

Վերջնարդյունքները պետք է բխեն նպատակներից և չափորոշիչներից:

1. ***Տարբերակումն ըստ միջավայրի***

- Սովորողներին բաժանել ընթերցանության խմբերի՝ հանձնարարությունը քննարկելու համար
- Թույլ տալ սովորողներին ցանկության դեպքում առանձին կարդալ:
- Ստեղծել հանգիստ, անաղմուկ միջավայր՝ օրինակ սովորողին առաջարկելով աշխատանքը կատարել գրադարանում:

Ուսուցիչը մոտենում է այն աշակերտներին, ովքեր ունեն նրա խորհուրդների և օգնության կարիքը և վերահսկում ամբողջ գործընթացը:

Տարբերակված ուսուցում կազմակերպելիս ուսուցիչը պետք է ունենա հստակ նպատակադրումներ:

Ուսումնական որոշակի նյութի ուսումնասիրությունից և ուսումնասիրության արդյունքները չափելուց հետո դասարանը բաժանվում է խմբերի.

1 խումբ – ուսումնական նյութը յուրացրած աշակերտներ, որոնց հետ անհրաժեշտ է տանել աշխատանքներ գիտելիքների ընդլայնման և խորացման ուղղությամբ:

2 խումբ – աշակերտներ, որոնք լավ չեն յուրացրել ուսումնական նյութը և ունեն բացթողումներ: Նրանց հետ տարվում են համապատասխան աշխատանքներ:

3 խումբ – աշակերտներ,որոնք ունեն խնդիրներ ուսումնական նյութի յուրացման հարցում: Նրանց համար մշակվում են համապատասխան առաջադրանքներ:

2-րդ խմբի աշակերտների համար որպես խորհրդատու և ուսուցչի օգնական կարող են լինել 1-ին խմբի աշակերտները, իսկ 3-րդ խմբի աշակերտների համար ՝ 1-ին և 2-րդ խմբի աշակերտները:

Ուսուցիչը հաջողության կհասնի միայն այն դեպքում, երբ անցկացրած դասը հետաքրքրի ու բովանդակալից կլինի դասարանի բոլոր աշակերտների համար: Այս մեթոդը թույլ չի տալիս պակաս կարողություն ունեցող աշակերտին զգալ թույլ՝ ուժեղ աշակերտների մեջ:

Տարբերակված ուսուցումը «Ֆրանսերեն» առարկայի խորացված ուսուցման դասարաններում

3-րդ դասարանում «Ֆրանսերեն» առարկայի խորացված ուսուցման շրջանակում կիրառում եմ բովանդակության, գործընթացի և վերջնարդյունքի տարբերակում ՝ հաշվի առնելով սովորողի կարիքներն ու հետաքրքրությունները ուսումնական գործունեության հետևյալ ձևերում՝

1. Հնչյունային վերլուծություն
2. Տառաճանաչություն և գրուսուցում
3. Ընթերցանություն
4. Բանավոր կապակցված խոսքի կառուցում

<u>1 .Հնչյունային վերլուծություն</u>

Հնչյունային լսողություն, հնչյունային վերլուծություն կատարելու կարողության զարգացմամբ սկսվում է ֆրանսերենի ուսուցումը, որոնք կարևոր նշանակություն ունեն հետագայում կարդալու և գրելու կարողությունների ձևավորման գործում:

Օրինակ՝ տարբերել ձայնավոր և բաղաձայն հնչյունները, ռնգային հնչյունները, ունկնդրմամբ տեքստերը լսելու և բառերն ու հնչյունները կրկնելու կարողություն, միավանկ, երկվանկ բառերի թվարկում: Հեգել և վանկատել բառերը.



2. Տառաճանաչություն և գրավոր խոսքի ուսուցում

Ճանաչել տպատառև ձեռագիր տառերը և տառամիացությունները



Նշել բառերի վանկային կորերը



Բառերը գրել ըստ սիլուետների: Հիշել և կիրառել c և g հնչյունների ճիշտ արտասանությունը



Բառի մեջ բ աց թողնված տառի լրացում:Տառային և բա ռային թելադրություններ



3. Ընթերցանության ընթացքում

Բառերի և բառակապակցությունների ընթերցում: Բնագրի ընթերցում

տառամիացությունների ճիշտ արտասանությամբ.



Lila est à l'école. C'est la récré.
Dans la cour, les enfants jouent aux billes, à la marelle, à cache-cache et à la corde à sauter.
Ils jouent aussi aux dominos et aux cartes.
La maîtresse joue au ballon avec quatre garçons.
Lila joue à l'élastique avec deux amies.

4. Բանավոր կապակցված խոսքի կառուցման ընթացքում աշխատում ենք թեմատիկ կանոնների շուրջ: Սովորողները նշում են, թե ինչ են տեսնում նկարում: Արտահայտում են իրենց մտքերը տեսածի մասին:Նախադասությունները լրացնում են տեղադրություն ցույց տվող բառերով:

Où sont Pic Pic et Pirouette ?
Félix cherche Pic Pic et Pirouette. Où sont-ils ?
Lila est sur le tatami et Tilou est dans la piscine.
Madame Bouba est derrière la table.
Monsieur Pierre est devant la table.
Pic Pic et Pirouette sont sous la table,
avec un gros gâteau aux fraises !



Տարբերել հաստատական և ժխտական նախադասությունները



Համապատասխանեցնել նկարները երկրաչափական պատկերների հետ:


Il y a 4 cercles et 1 carré.
1
Il y a 2 carrés, 2 cercles et 1 triangle.
2
Il y a 6 carrés, 2 triangles et 3 cercles.
3

Եզրահանգում

Քանի որ հնարավոր չէ այժմ կատարել առաջադրանքների վերլուծություն տարբերակված մոտեցման կիրառման արդյունքում ճշգրիտ թվային չափանիշներով, բավարարվենք տեսական մասով և իմ աշխատանքային փորձով:

Կարծում եմ, անիմաստ է խոսել սովորողի հետ մի բանի մասին, որն ինքը չի հասկանում, սովորեցնել դա, առավել ևս օտար լեզվի պարագայում: Ֆրանսերենի ուսուցումը սկսում ենք բանավոր նյութի հաղորդումից (ներկայացնել իրեն և ընկերոջը, իմանալ գույները, թվերը, երկրաչափական մարմինները, մրգերի, բանջարեղենների, վայրի և ընտանի կենդանիների անունները և այլն):

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ապահովել առարկայական չափորոշիչներով սահմանված նվազագույն պահանջները նախ բոլոր սովորողների համար, ապա՝ յուրաքանչյուրին կատարելու հաջորդ քայլը՝ իրենց առավելագույն ներուժին համապատասխան: Դա իր մոտ առաջացնում է հետաքրքրություն և խանդավառություն իր կատարած աշխատանքի նկատմամբ և յուրաքանչյուր դասին գրանցում է որոշակի աճ: Ուսուցչի ճիշտ մոտեցումը ամեն մի սովորողի կարիքներին հանգեցնում է նրան, որ ուսումնական նյութը հասանելի է դառնում բոլոր սովորողներին՝ յուրաքանչյուրին իր համապատասխան և հասանելի չափով:

Օգտագործված գրականություն

1. https: // forum.armedu.am> forum
2. https: // m.facebook.com>permalink
3. Հանրակրթական պետական չափորոշիչ.

   http://escs.am/am/news/6718?fbclid=IwAR2skiWoH6C26Ws1VDExn1fXCtwIzTxcw5vg71T5AhxwP_OCFK_CZx-Cxds
4. J'apprends à lire et à écrire (Clé international)